# «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ» ԽԱՂԵՐ

*Գիտության ոլորտի բարեփոխումներ անվան տակ ԳԱԱ-ն ինստիտուտներ է միավորում եւ տնօրեն նշանակում «յուրայիններին»:*

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստի երեկվա օրակարգում մի քանի
ւրց կար, այդ թվում՝ նորաս-
եղծ գիտական կենտրոնների
նօրենների ընտրությունները:
ԱԱ նախագահ Ռադիկ Մարտի-
ոսյանը արգելում էր լրագրողների
ւտքը դահլիճ: Նիստի ավարտից
տո էլ նա չէր թույլատրում լու-
անկարել, հայտարարելով՝ «մաս-
ավոր անձին իրավունք չունեք
կարել»: Իսկ ես լուսանկարում էի
թե մասնավոր անձին, այլ
ԱԱ նախագահին, այն էլ՝ ոչ թե
քում, այլ նիստի մասնակիցնե-
ներկայությամբ: Այլ հարց է, որ
Մարտիրոսյանը չէր ցանկա-
ւմ, որտեղ լրագրողները ակա-
տես լինեին, թե ինչպես է
կադեմիկոս, միկրոբիոլոգ Էվրիկ
ֆրիկյանը անասնաբուժական
տությունների թեկնածու Վիգեն
ղինյանին փորձում դարձնել
կրոբիոլոգիայի եւ մանրէների
վանդադրման գիտատեխնոլոգի-
կան կենտրոնի տնօրեն, երբ կո-
տիվի համակրանքը կենսաբա-
կան գիտությունների դոկտոր-
ոֆեսոր Հրաչյա Հովհաննիսյա-
կողմն է: Կամ ԳԱԱ նախագա-
, հավանաբար, չէր ուզում տես-
նք, թե ինչպես են ոմանք բոյ-
տում ընտրությունները եւ իրենց
կնածությունները հանում, որով-
տեւ Օրգանական եւ դեղագոր-
կան քիմիայի գիտատեխնոլո-
ական կենտրոնի տնօրենի
աշտոնի հավակնորդների թվում
վարչապետի սանիկ, ՀՀԿ-ա-
ն պատգամավոր, քիմիական
տությունների դոկտոր-պրոֆե-
ր Արարատ Մալխասյանը: Վեր-
նս ասաց, որ եթե գիտական
ստակ չունենար, չէր անցնի՝
յնիսկ վարչապետի միջնորդու-
ան պարագայում:

ինձ հաջողվեց ներկա գտնվել
ԱԱ կլոր սրահում ընթացող նա-
ագահության նիստին, որ մանկ-
րհուրդ էր հիշեցնում: Անենա-
րջում միայն ակադեմիկոսները



*Ակադեմիայում էլ են սպառնում եւ հրմշտում, ինչն ազդում է նկարների որակի վրա:*

նկատեցին «օտարին» եւ հրմշտելով փորձեցին ազատվել իմ ներկայությունից: *«Ֆոտոապարատդ կջարդեմ»*,- դոների մոտ սպառնաց ներկաներից մեկը: Միկրոբիոլոգիայի ինստիտուտի նախկին տնօրեն, այժմ խորհրդական Է. Աֆրիկյանը դասղեկի նման գովաբանում էր իր հովանավորյալ անփորձ Վ. Գոգինյանին, փորձելով հիմնավորել նրա՝ Միկրոբիոլոգիայի եւ մանրէների ավանդադրման գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի արժանի թեկնածու լինելը: Նշենք, որ վերջինս 36 տարեկան է, 2 տարի առաջ պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Թեյի սնկերի ազդեցությունը հավերի ծվադրության վրա» թեմայով: Վ. Գոգինյանը նախագահության առաջ ելույթ ունեցավ ռուսերեն, այն դեպքում, երբ ՀՀ օրենքով ՊՈԱԿ տնօրենի աշխատանքային լեզուն հայերենն է:

Միկրոբիոլոգիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հրաչյա Հովհաննիսյանը համոզված է, որ Է. Աֆրիկյանը ուզում է անցկացնել իր դրածոյին, *«որտեղ ինքը ղեկավարի ոչ միայն ավանդադրման կենտրոնը, այլեւ Միկրոբիոլոգիայի ինստիտուտը, որը ժամանակին նրա ձեռքով է ավերվել»*: Հ. Հովհաննիսյանը նախագահության նիստում շեշտեց, որ ինքը պաշտոնամոլությամբ չի տառապում, այժմ Բժշկական համալսարանի պրոֆեսոր է եւ ավելի բարձր աշխատավարձ է ստանում, քան ԳԱԱ փոխնախագահը. *«Այնպես որ, դառնալով տնօրեն, ես տուժում եմ: Իմ ընտանիքը դեմ է իմ որոշմանը: Ուղղակի կոլեկտիվը, ելնելով ինստիտուտի ծանր վիճակից, ցանկացել է ինձ տնօրենի պաշտոնում տեսնել»*: Նա առաջարկեց, որ նախագահությունը մինչեւ Է. Աֆրիկյանի թեկնածուին տնօրեն դարձնելը՝ այցելի ինստիտուտ, տեսնի ինչ վիճակ է այնտեղ տիրում: *«Եթե այդ թեկնածուին եք ընտրում, ուրեմն ամբողջ պատասխանատվությունը ձեզ վրա է ընկնում»*,- ասաց նա՝ հիշեցնելով, որ ԳԱԱ նախկին նախագահ Ֆադեյ Սարգսյանը այցելում էր ԳԱԱ բոլոր ստորաբաժանումները, ներկայացնում իր ծրագիրը, իսկ Ռ. Մարտիրոսյանը մեկ տարի է՝ դարձել է նախագահ ու այդպես էլ չի հավաքել կոլեկտիվներին ու չի ծանոթացրել իր ծրագրերին: *«Ռադիկ Մարտիրոսյանն իր ակադեմիական աշխատաոճը չի փոխել: Երբ ռեկտոր ես, նստած՝ քո տաքուկ կաբինետում, կարող ես իմանալ՝ շենքը տա՞ք է, թե՞ ցուրտ: Ակադեմիայի նախագահը չի կարող տեղում նստած իմանալ, թե ինչ վիճակում են ԳԱԱ բոլոր ստորաբաժանումները, որոնք սփռված են ոչ միայն Երեւանում, այլեւ հանրապետությունով մեկ»*,- կարծում է նա:

Ինչպես եւ սպասվում էր, Միկրոբիոլոգիայի եւ մանրէների ավանդադրման գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն դարձավ Վիգեն Գոգինյանը, Կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն՝ Գագիկ Սարկիսովը, իսկ Օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն՝ Արարատ Մալխասյանը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ